

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՅՈՁԵՖ ԿԱՐՍՏԸ

Գերմանացի նշանավոր հայագետ Յոզեֆ Կարստի վաստակը հայերենագիտության ասպարեզում մեծ է և անուրանալի: Բավական է հիշել, օրինակ, նրա հայագիտական ժառանգության բարձրակետ հանդիսացող միջին հայերենին նվիրված աշխատությունները, որոնք մինչ օրս գրեթե լիովին պահպանել են իրենց արդիականությունն ու գիտական արժեքը: Դրա վառ ասպարույցն է նրա «Կիլիկյան հայերենի պատմական քերականության»¹, վերջերս կատարված հայերեն թարգմանությունն ու հրատարակումը, որի շնորհիվ այն վերջապես մատչելի դարձավ նաև հայալեզու ընթերցողին: Սակայն Կարստն իր ներդրումն ունի նաև հայերենագիտական այլ խնդիրների լուսաբանման գործում, որոնք թեև ոչ միշտ են վերջնական լուծում ստանում նրա կողմից, բայց ուշագրավ են իրենց հարցադրմամբ և իր ժամանակի համար բավականին առաջադեմ եզրակացություններով: Այդպիսին են, օրինակ, հայոց լեզվի ծագման և բաղադրիչների, ինչպես նաև գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցերը: Վերջիններիս ճիշտ և վերջնական լուծմանը խոչընդոտել է հատկապես Կարստի «ալարողյան» տեսությունը, այսինքն՝ նրա անհիմն տեսական հայացքները լեզվական անցումների անընդհատականության, լեզուների խաչավորման և խառը լեզվի մասին, որոնք հավասարապես բացասականորեն են ազդել ինչպես հայոց լեզվի ծագման ու բաղադրիչների ճշգրտման, այնպես էլ գրական լեզվի ու բարբառների փոխհարաբերության որոշմանն ուղղված նրա փորձերի վրա՝ այսպիսով ի չիք դարձնելով նախկինում արված արժեքավոր եզրակացությունները: Ստորև կանդրադառնանք հայ բարբառագիտության բնագավառում Կարստի կատարած որոշ դիտողություններին, որոնք, կարծում ենք, արժանի են հիշատակման, քանի որ

¹ J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901; 3. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002:

առնչվելով ինչպես գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությանը, այնպես էլ բարբառային տարբերակվածությանը հայոց լեզվի պատմության հին և միջին շրջաններում՝ իրենց մեջ, անկասկած, ճիշտ միտում են կրում:

Կարստի բարբառագիտական ուսումնասիրությունները սահմանափակվում են նրա «Կիլիկյան հայերենի պատմական քերականությամբ», որն իր բնույթով նաև բարբառագիտական աշխատություն է: Բացի հայերենի միջին շրջանի բարբառների հնարավոր գոյության փաստից, Կարստն անդրադառնում է ժամանակակից մի շարք բարբառների և յուրաքանչյուր ձևի քննության ժամանակ գուգադրում վերջիններիս համարժեքները: Նրան հիմք են ծառայում Յ.Յանունցի՝ լեհահայերենի, Ս.Սարգսյանցի՝ Ագուլիսի, Լ.Ստեյրյանցի՝ Մշո և Ա.Տոմսոնի՝ Ախալցխայի և Տփղիսի (Թբիլիսիի) բարբառների ուսումնասիրությունները: Մյուս կողմից, խորամուխ լինելով կիլիկյան միջին հայերենի կառուցվածքի մեջ՝ Կարստը փորձում է լուծում տալ նաև նրա ծագման և գոյացման հարցերին և շոշափում նաև V դարի բարբառային տարբերակվածության հարցը, որը բազմիցս եղել է նրա ուշադրության կենտրոնում և նույնպես զերծ չի մնացել նրա «ալարոդյան» տեսության ազդեցությունից:

Նախքան Կարստի վերոհիշյալ տեսակետներին անդրադառնալը, հարկ ենք համարում փոքր ինչ լույս սփռել ժամանակի և նախորդ շրջանի լեզվաբանական մտքի կողմից խնդրո առարկա հարցի լուծման տարբերակների վրա: Բանն այն է, որ հայոց լեզվի պատմության հին և միջին շրջաններին հատուկ չէ բարբառային միևնույն մասնատվածությունը: Եթե միջին հայերենին բնորոշ են բարբառային հստակ տարբերությունները, ապա հին հայերենը հանդես է գալիս, այսինքն՝ գրավոր հուշարձաններում վկայվում է համեմատաբար միասնական տեսքով: Այդ հանգամանքը առիթ էր տալիս շատերին, այդ թվում նաև այնպիսի հայագետների, ինչպիսիք են Դ.Յուրբշմանը, Ա.Մեյեն, Դ.Աճառյանը, ժխտելու տարբերակային այլ ձևերի գոյությունն այդ ժամանակաշրջանում:

Սակայն հարկ է նշել, որ դեռևս Դիոնիսոս Թրակացու թարգմանիչները V դարի համար տարբերում էին նաև, այսպես կոչված, Գորդայից բարբառը²:

² Н.Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр.104-105.

Այս մասին ավելի որոշակի է խոսել VIII դարի քերական Ստ.Այունեցին, որը տարբերելով հայերենի միջերկրյա և եգերական բարբառները, վերջիններիս շարքին է դասում Կորճայքի, Տայքի, Խութի, Չորրորդ Չայքի, Սպերքի և Արցախի բարբառները³: Ի դեպ, Բ.Յյուրշմանն ու Բ.Աճառյանը հակված են այստեղ հիշատակված բարբառները համարելու Չայաստանի տարածքում խոսվող լեզուները⁴: V դարի մատենագիր Եզնիկ Կողբացին նույնպես տարբերություն էր տեսնում հյուսիսային և հարավային բարբառների արտահայտչական ձևերի միջև. միևնույն «քամի է փչում» արտահայտությունը, ըստ նրա վերնագավառներում ասում են «սիք շնչէ», ստորին շրջաններում՝ «այս շնչէ»⁵: V դարի բարբառային տարբերակվածության հարցին անդրադարձել են նաև Շ. Ջրպետյանը⁶, Ա.Այտընյանը⁷, Զ.Պատկանյանը⁸ և Լ.Մսերյանցը⁹, որոնք բոլորն էլ դրականորեն են լուծել այն: Նշենք, որ Շ.Ջրպետյանի ազդեցությունը զգալիորեն կրել է նաև Յ.Կարստը:

Ներկայումս հին հայերենի բարբառներ ունենալու հարցը դադարել է լինել վիճարկման առարկա: Առաջին հերթին սրա օգտին են խոսում այդ շրջանում որոշ հեղինակների՝ Ժողովրդագիտական լեզվի տարրեր պարունակող աշխատությունները (Փ.Բուզանդ և այլն), որտեղ ի հայտ են գալիս նաև նրանց տեղական ծագման վկայությունները: Առավել ևս, երբ մատենագիրներն իրենք նույնպես ուշադրություն են դարձրել այդ հանգամանքի վրա և հիշատակել այդ մասին, ինչպես Եզնիկ Կողբացին, որը, ինչպես վերը նշվեց, խոսում է միևնույն հասկացությունը տարբեր բառերով արտահայտելու մասին կամ Աճառուն մեկնիչը, որի բերած զուգահեռ տարբերակներից մենք տեսնում ենք ծայնեղ հնչյունների խլացման և խուլերի

³ Նույն տեղում, էջ 187:

⁴ St'ya H.Habschmann, Armenische Grammatik, I, Leipzig, 1895, S.519. Բ.Աճառյան, Չայոց լեզվի պատմություն, 2, եր., 1951, էջ 128-129:

⁵ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1912, էջ 65:

⁶ Ch.Cirbled, Grammaire de la langue arménienne, Paris, 1823.

⁷ Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, եր., 1987, նախաշ. էջ 166:

⁸ К.Патканов, Исследование о составе армянского языка, Спб., 1864, стр. XIV - XV.

⁹ Л.Мсерианц, Армянская диалектология, М., 1998, стр. 2-3.

շնչեղացման դեպքեր՝ բազուկ, պազուկ, փազուկ¹⁰: Այս մասին են վկայում նաև ժամանակակից բարբառները և նրանց հիման վրա Գ.Ջախուկյանի կողմից կիրառված վիճակագրական բարբառագիտության, այսպես կոչված, «ետադարձ ուղու» տվյալները¹¹:

Ինչ վերաբերում է Կարստին, ապա հարկ է նշել, որ նա երիցս փոխում է իր կարծիքը V դարի բարբառային տարբերակվածության հարցի վերաբերյալ: Նախապես նա հարում է հայագիտության մեջ գերակայող այն կարծիքին, որի մասին խոսվեց վերը, այսինքն, գրաբարը (նրա հիմքում ընկած բարբառը) շարունակել է իր գոյությունը միջին ժողովրդական հայերենում և աստիճանաբար փոփոխվել, որպեսզի հետագայում բաժանվի արևմտա- և արևելահայերենների և վերջապես զարգանա ժամանակակից բարբառների տեսքով: Անշուշտ, V դարում կարող էին գոյություն ունենալ այլ բարբառներ, որոնց տարբերությունը սակայն այդքան էլ մեծ չէր, և որոնք, հավանաբար, իրենց արտացոլումն են գտել գրաբարում կամ նրա շարունակությունը հանդիսացող ժողովրդական միջին հայերենում: Իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականության» նախաբանում նա նշում է. «Կիլիկյան հայերենը հանդիսանում է հին գրական հայերենի համապատասխան խոսակցականի շարունակությունն ու հետագա զարգացումը, վերջինս արդեն հին հայերենի գոյության ժամանակ պետք է, որ նկատելի կերպով շեղված լիներ ավելի արիեստականորեն մշակված և վաղ քարացած հին գրական հայերենից»¹²: Այսինքն, Կարստն այստեղ ընդունում է միայն գրական լեզվին զուգահեռ խոսակցական լեզվի գոյությունը, հարում կարծիքին, որ գրական լեզուն կարող է կրել միայն համապատասխան խոսակցականի ազդեցությունը, բայց ոչ գրական լեզվից դուրս կանգնած, այլ բարբառների¹³: Այս տեսակետն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ յուրաքանչյուր հեղինակ, գրիչ, թարգմանիչ կրում է իր տեղական բարբառի ազդեցությունը և ներդրում իր գրավոր խոսքի մեջ¹⁴:

¹⁰ H.Адоиц, նշվ.աշխ., էջ 149:

¹¹ Գ.Բ.Ջախուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:

¹² J.Karst, նշվ.աշխ., էջ 5:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Հմմտ. Վ.Դ.Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 77:

Հետագայում այցելելով Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանների գրադարանները՝ նոր նյութերի հիման վրա Կարստը փոխում է իր տեսակետն այս հարցի վերաբերյալ: «Կիլիկյան հայերենը չի կարող լինել մեզ ավանդված դասական հայերենի պատմական շարունակությունը: Հետևաբար այն պետք է սերի դասականից դուրս կանգնած մեկ այլ հին հայերեն բարբառից: Հին հայերենի բարբառային տարբերակվածությունն, այսպիսով, ներքին օբյեկտիվ պատճառներից ելնելով վերջնականապես կանխադրվում է»¹⁵: Ի հաստատումն իր այս տեսակետի Կարստը վկայակոչում է նաև Դիոնիսոս Թրակացու թարգմանությունը, որտեղ բացի քերականական արհեստական ձևերից կան նաև իրական փաստեր: Սակայն նա իր տեսակետը հիմնավորում է ելնելով միջին հայերենի տվյալներից: Կարստը բերում է ինչպես բառապաշարային, այնպես էլ բառակազմական և քերականական փաստարկումներ: Այստեղ իրենց առաջնային դերն ունեն միջին հայերենին բնորոշ -եր, -նի, -ի, -տի հոգնակերտները, կիլիկյան հայերենի գործիական հոլովի աւմ (օմ) վերջավորությունը, ի տարբերություն դասական -ամբ-ի, ինչպես նաև կիլիկյան հայերենի՝ ինա, իսա, իտա դերանուններն ու իոն, իոս, հոտ դերանվանական մակբայները և այլն: Բառակազմության մեջ ամենամեծ տարբերությունը հանդիսանում է բառամիջի ալ -ի սղումը, ինչպես՝ կլ. մտել = դաս. մտանել, կլ.գտնուլ = դաս.գտանել և այլն¹⁶:

Կարստի վերոհիշյալ տեսակետի հիմնավորման համար մեծ դեր են խաղացել նաև V դարի մատենագիրներ Ղ.Փարպեցու և Փ. Բուզանդի ժողովրդախոսակցական տարրեր պարունակող աշխատությունները, որտեղ ի հայտ են գալիս տվյալ շրջանի ժողովրդախոսակցական և բարբառային լեզվի բազում տարրեր, այդ թվում՝ վերոհիշյալ հոգնակերտների առաջին վկայությունները: Ուշագրավ է, որ սա այն սակավաթիվ հարցերից մեկն էր Կարստի «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» հիմնարար աշխատության մեջ, որ խիստ քննադատության ենթարկվեց իր ժամանակին: Քննադատների թվում էին նաև այնպիսի անվանի լեզվաբաններ, ինչպիսիք են

¹⁵ J.Karst, *Աշխ.*, էջ 134:

¹⁶ Նույն տեղում, էջ 136-138:

Հ.Յուրջմանն¹⁷ ու Ա.Մեյեմ¹⁸: Վերջինս հիմնականում կասկածելի էր համարում վերոհիշյալ աշխատությունների վավերականությունը՝ այդ դեպքերը համարելով հետագա ընդօրինակող գրիչների կողմից կամայական փոփոխություններ: Մինչդեռ հայտնի է, որ Փ. Բուզանդին և Ղ.Փարպեցուն հատուկ են ժողովրդագիտական լեզվական ոճն ու համանման լեզվական միջոցների օգտագործումը, և վերոհիշյալ դեպքերն ամենևին էլ հետագա գրիչների նորամուծությունը չեն¹⁹: Եվ եթե Փարպեցու մոտ իշխում է համաժողովրդական լեզվական ոճը, ապա Բուզանդը հակված է դեպի գավառական խոսքի կողմը²⁰:

Այսպիսով, հին հայերենի բարբառային տարբերակվածության և կիլիկյան միջին հայերենի բարբառային այլ հիմքի վերաբերյալ Կարստի այս մոտեցումը այն ճիշտ դիտողություններից է, որ ընդունվում է այժմ և պատիվ բերում նրա հեղինակին: Սակայն արդեն իր ուշ շրջանի գործերում, ինչպես «Հայ բանասիրության պատմություն» մեջ, Կարստը հարելով Հ.Շուխարդտի հայտնի «խառը լեզվի» ուսմունքին և հայերենը համարելով երկբնույթ՝ կրկին վերադառնում է իր նախնական տեսակետին, ըստ որի, գրաբարը հանդես է գալիս որպես միատարր ամբողջություն, իսկ նույն շրջանի մյուս բարբառները համարվում են վերապրուկներ ալարոդյան, թորգոմյան և այլ տարրերի, որոնք բարբառների առաջացման գործում հանդես են գալիս որպես պայմանավորող գործոններ²¹: Որպես ալարոդյան վերապրուկ և գրաբարից ամենաշատ տարբերվող բարբառ նա հիշատակում է զոկերենը՝ Ազուլիսի բարբառը՝ գրեթե նույնացնելով այն բասկերենի հետ²²: Այսպիսով, գրաբարը հակադրելով մյուս բարբառներին՝ Կարստը հակադրում է նաև հնդեվրոպական հայերենը՝ ոչ հնդեվրոպականին²³:

¹⁷ H. Hsbschmann, J. Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, IF. Anz., 12, 1901.

¹⁸ Ա. Մեյեմ, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 441-442:

¹⁹ Տե՛ս Վ. Ղ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 169, 207:

²⁰ Նույն տեղում, էջ 199, 200:

²¹ J. Karst, Geschichte der armenischen Philologie, Heidelberg, 1930. S. 27.

²² J. Karst, Alarodiens et Proto-Basques, Vienne, 1928, p. 58-59.

²³ J. Karst, Geschichte der armenischen Philologie, Heidelberg, 1930. S. 32.

Հայտնի է, որ արդեն XX դարի առաջին կեսին, նույն հարցի վերաբերյալ համաձայն սխալ մոտեցում է ցուցաբերում Ա.Ղարիբյանը, որը լինելով Ն.Մառի աշակերտը և ազդված նրա «հաբեթական» տեսությամբ՝ հայերենի բարբառները համարում է նախկին ցեղային լեզուների մնացորդներ, որոնք ոչ թե հեռացել են միմյանցից, այլ մերձեցել: Հետագայում նա հրապարակավ հրաժարվում է իր հայացքներից: Ինչ վերաբերում է միջին հայերենի բարբառային տարբերակվածությանը, ապա, ի տարբերություն V դարի, այս շրջանի համար հայագիտական շրջանակներում բարբառների առկայության հարցը տարակարծության առիթ չի տվել: Սա պայմանավորված է նրանով, որ այս փուլին հատուկ է բարբառային ավելի հստակ տարբերակվածությունը: Չնայած այն բանին, որ այս շրջանում գերակայող դերը պատկանում է կիլիկյան միջին հայերենին, սակայն մեզ են հասել նաև այլ բարբառների վկայություններ, որոնք զուրկ են նորմավորման և միասնականացման որևէ ընդհանուր միտումից և այս կամ այն չափով կրում են գրաբարի և կիլիկյան միջին հայերենի ազդեցությունը: Հարկ է նշել, որ կիլիկյան միջին հայերենը չի հասել գրական լեզվի կատարյալ վիճակին, այլ, ձգտելով միասնականացման և նորմավորման, հանդես է եկել որպես գրականացող լեզու²⁴: Կարստը, ինչպես իր նախորդները, նույնպես չի բացառում բարբառների գոյությունն այս ժամանակաշրջանում: Իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականության» նախաբանում ասում է. «Եթե նույնիսկ կիլիկյան հայերենն իր ժամանակի միակ բարբառը չէր, ապա այն կարելի է համարել միջին հայերենի մեզ ամենածանոթ և ամենակարևոր բարբառը»²⁵:

Համեմատելով Սմբատ Սպարապետի և Մխիթար Հերացու աշխատությունների լեզուն նա փորձում է գտնել այդ ժամանակաշրջանի բարբառային տարբերությունները: Այսպես, Մխիթար Հերացու երկում նկատում է մի շարք լեզվական առանձնահատկություններ, որոնք բացակայում են Սմբատի աշխատություններում, օրինակ, հոգնակի ուղղականի ս վերջավորությունը (Սմբատի ձեռագրերում՝ միայն տոս բառն է), ը-ն հաճախ վերածվել է ի-ի, օր.՝

²⁴ Հմմտ. Գ.Բ.Ջահուկյան, Միջին հայերենը որպես լեզվական որակ, ԲեՅ, 1993, 1, էջ 17:

²⁵ J.Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, S.4, 1901.

չի (Սմբատ՝ չը) վաղակատար դերբայն ունի քը վերջավորությունը (Սմբատ՝ ել) և այլն²⁶: Կարստն, այսպիսով, արևմտահայ շրջանների համար բացի կիլիկյան հայերենից տարբերում է նաև այսպես կոչված «հյուսիսային» բարբառը, որը նոր արևմտահայ բարբառների մայրն է: Վերջինիս հատուկ են՝ գործիականի -ով վերջավորությունը, ի տարբերություն կիլիկյան աւմ (օւմ)-ի. կիլիկյանին բնորոշ ինա, իսա, իտա դերանունների բացակայությունը, դերանվանական հոլովման -ոնք, -ոնց վերջավորությունները հոգնակի ուղղականում և սեռականում, ի տարբերություն կիլիկյան՝ ոք, -ոց -ի և այլն²⁷: Այս բարբառի մասնակի գրական դրսևորումները XIV դարից սկսած ի հայտ են գալիս Ամիրդովլաթ Ամասիացու, Ասար Սեբաստացու, Բունիաթ Սեբաստացու, այսինքն հյուսիսարևմտյան Փոքր Հայքի հեղինակների բժշկագիտական գրվածքներում, ինչպես նաև Հ.Երզնկացու երկերում և մի շարք ժողովրդական երգերի և առակների ժողովածուներում²⁸: Ուշագրավ է, որ ըստ արդի ուսումնասիրությունների, հայերենի միջին շրջանի համար տարբերակվում է նաև Բարձր Հայքի նշանավոր քաղաք Երզնկայի բարբառը, որը մասամբ համընկնում է Կարստի, այսպես կոչված, հյուսիսային բարբառին (հմմտ. կու ճյուղ, այ>ա և այլն)²⁹: Այսպիսով, քննելով կիլիկյան միջին հայերենն իր ողջ պատմական զարգացման մեջ՝ Կարսոց փաստորեն զուգահեռաբար փորձում է լուծում տալ նաև կիլիկյան միջին հայերենի գոյացման, նրա բարբառային հիմքի, հետևաբար նաև հին հայերենի բարբառային տարբերակվածության հարցերին և կատարում արժեքավոր եզրակացություններ: Ի մի բերելով վերոշարադրյալը, նշենք Կարստի այն ճիշտ դիտողությունները, որոնց դիմացել են ժամանակի քննությանը, և որոնք թերևս միայն նրա տեսական հայացքների բացասական ազդեցության հետևանքով սպառնիչ լուծում չեն ստացել նրա կողմից. ա) հայոց լեզուն V դարում ունեցել է բարբառային տարբերակվածություն, բ) կիլիկյան հայերենը գրաբարի անմիջական շարունակություն չէ, քանի որ ունի բարբառային այլ հիմք, գ) հայոց լեզվի պատմության միջին շրջանում բացի կիլիկյան հայերենից գոյություն են ունեցել նաև այլ բարբառներ:

²⁶ Նույն տեղում, էջ 3-4:

²⁷ Նույն տեղում, էջ 137:

²⁸ Նույն տեղում, էջ 138:

²⁹ Տե՛ս Ս.Հ.Սուրադյան, Գրական միջին հայերենի տեղիտորիալ տարբերակների հարցի շուրջը, «Լեզվի և ոճի հարցեր», III, Եր., 1975, էջ 211-251: